

ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ

Մեծանուն գիտնական (երկրաբան-քիմիկոս), Բեռլինի, Բրեսլավի, Ախենի համալսարան-ների պրոֆեսոր, Ռուսական կայսերական ակադեմիայի թղթակից անգամ Անդրեաս Արծրունին (1847—1898) Գերմանիայում և Պետերբուրգում գտնված ժամանակ նամակներ է գրել Թրի-խտիում աշխատող իր եղբորը՝ ականավոր հրապարակախոս, հայտնի «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունուն (1845—1892)։ Նամակները ներկայացնում են զգալի հետաքրքրություն, քանի որ նրանցում բացահայտվում են ժամանակի հասարակական և գիտական կյանքի մի շարք կողմերը, ինչպես և երկու եղբայրների կյանքի և գործունեության առանձին դրվագներ։ Նամակները, որ պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Գր. Արծրունու ֆոնդ, №№ 100, 101, 113—115, 119, 124, 126, 134, 136, 151, 163—165, 167, 173, 174, 176, 177, 179), տպագրվում են մասնակի կրճատումներով։

Բանասիր. գիտ. քեկնածու Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

3 ապրիլի, 1881

<Բեռլին>

Երկար ժամանակ առանց նամակի մնալով քեզանից, ես շատ անհանգիստ եմ, բայց ահա եկան երկու նամակներդ փետրվարի 28-ին և մարտի 7-ին և նրանց հետ «Մշակի» համարները, որոնք նմանապես մի ժամանակ չէին հասնում ինձ։ Նախ և առաջ ընդունիր շնորհակալությունս այն թղթակցությունների համար, որ դու իմ մասնավոր նամակներից կաղմեցիր...

Ես քո առաջարկությունից օգուտ կքաղեմ և երբ այնքան զբաղված կլինեմ, որ ինձ դժվար կլինի թղթակցելու, ես գոնյա մասնավոր նամակներով քեզ կհաղորդեմ նորություններ, որք կարող կլինես գործածել «Մշակի» համար։

Այս օրերս սպասում եմ այստեղ նկարիչ Այվադովսկիին, որ պիտի այստեղով անցնի Լոնդոն գնալու նպատակով, ուր նա շատ պատկերներ է ուղարկել հանդեսի համար։ Դոցա թվում գտնվում են նաև այն երեք մեծ պատկերները, որոնց վերա ներկայացված է Ամերիկայի գյուտը՝ Հուլս կա, որ Լոնդոնի հանդեսի վերջանալուն պես այդ պատկերները կանցնեն Եվրոպայի և այլ մայրաքաղաքները, այնպես որ և մենք այստեղ նրանց կտեսնենք։ Նորերումս վիպասան Շպիլհագենի¹ հետ միասին մի ծանոթիս տան մեջ պատահեցանք և ես ճշմարիտ մի քանի ղվարճալի ժամեր վայելեցի նրա հետ խոսելով։ Խոսակցությունը քաղաքական էր և վերաբերում էր գլխավորապես բիսմարկյան ետադիմական ձգտումներին։ Լեովե (Leove), պատգամավոր առաջադեմ կուսակցությունից, որ նմանապես ներկա էր և մեր խոսակցության էր մասնակցում (մենք երեքով էինք մի սենյակի մեջ նստել ճաշից հետո), հետաքրքիր անցքեր էր պատմում անցած ժամանակներից, մասնավորապես 1848 թվից... Այս սերունդը շատ ավելի հետաքրքիր է քան այժմյանը՝ և նա շատ ավելի տեսել է, շատ ավելի մարտնչել է գաղափարների համար...

Իտալիայի Իսկիա կղզու երկրաշարժից վնասվածների օգտին շարունակաբար հավաքել հավաքել. նույնպես և Նիցցայի մեջ թատրոնի հրդեհից վնասվածների համար:

1. Շպիլհազեն Ֆրիդրիխ (1829—1911)—գերմանացի գրող և հասարակական գործիչ:

2

12 ապրիլի, 1887

<Բեռլին>

... Ես իհարկե շատ ուրախ եմ, որ բժիշկ Տիգրանյանը¹ մտածեց ինձ էլ ուղարկել իր «Առողջապահական թերթը» և համակրությունով հիշեց ինձ: Դեռևս ստացած չեմ, բայց սպասում եմ անհամբեր, որ տեսնեմ այս նոր հրատարակությունը՝ հիմնված մի ազնիվ մարդու կողմից բարի նպատակով...

«Հասարակական հանելուկ» առաջնորդող հոդվածն ինձ էլ առանձին աշխատելու և այնպես ասելու, որ ուրիշ պատճառով, որով դա թիֆլիսի բնավորություններն է նկարագրում և այնքան մտրակում: Դա իհարկե նոր բարեկամներ դժվար թե կծնեցնի «Մշակին», բայց ընթերցողները նորից կհասկանան, որ «Մշակը» ուժ է, որ նա չի շողորթորթում հասարակությանը, որ նա իր կարծիքից և ուղղությունից չէ շեղվում և ոչ թե իր օգուտն ունի աշխատանք, այլ հասարակաց օգուտը, և որ որքան և դառն լինեն ճշմարտությունները, «Մշակը» դրանց ուղիղ երեսին է ասում, արդար և ազնիվ վարվելով, բարձր պահելով իր դրոշակը, որ արդարության, ճշմարտության և անկեղծության դրոշակն է:

Դու խնդրում ես, եղբայր, որ քիչ հաղորդեմ այստեղի քաղաքական տրամադրությունը: Գլխավոր հարցերը, որ զբաղեցնում են հասարակությունը, ներքին քաղաքականությանն են վերաբերվում, կամ հասարակական են: Բիսմարկի դեմ ավելի և ավելի դառնացած կերպով են վերաբերվում մինչև անգամ չափավոր ազատամիտ կուսակցությունները: Նրա անխնայ և ինքնակամ վարմունքը ռախսատագի վերջին նիստերին ներկայացրած նոր օրենքները հարցերի մեջ սաստիկ վրդովեցնում են...

Վաղը վերջապես գնալու եմ երկու օրով Դրեզդեն, այսօր պետք է գնայի, բայց ուշացա և վաղն էլ միայն կարող եմ գնալ մուգեումի մեջ աշխատանքը վերջացնելուց հետո, այսինքն 3 ժամից հետո: Ուրբաթ օրը, տոնի պատճառով—դա ամենամեծ տոներին մեկն է այստեղ, այդ ուրբաթ օրը զատկից առաջ—չեմ լինելու մուգեումի մեջ և թույլտվություն ստացա նաև շաբաթ օրվա մեջ, գոնյա քիչ կհանգստանամ՝ ես չափազանց դադրած եմ:

Դուցե Դրեզդենից կգրեմ:

Առողջ եղեք:

1. Տիգրանյան Լևոն (1843—1906)—բժիշկ, սովորել է Կ. Եղյանի մոտ, բարձրագույն կրթություն է ստացել Դորպատում, մասնակցել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Եղել է Երևանի քաղաքային բժիշկ, հրատարակել է «Առողջապահական թերթ» (1881—1883), արտոբնակ է Դորպատ, 1894 թ. ընտրվել է Երևանի քաղաքապետի: Նրա գրվածքներից առավել կարևոր է «Իմ հիշատակարանը» (անտիպ): Թարգմանել է «Ֆաուստը», «Տորկվատո Տասսո», «Էդմունդ» և այլն:

Վաղը և մյուս օրը վերադառնում ենք Բեռլին, ուր այնքան աշխատանք է դիվել, որ ես էլ ետ ձգել չեմ կարող, բացի սորանից, իմ արձակուրդը անցնում է կամ իսկապես անցել է և ես պիտի շտապեմ:

Ուղարկում եմ քեզ մի փոքրիկ նամակագրություն Բեռլինից, որովհետև Բեռլինի գործերի վրա է գլխավորապես: Journal d' Orient-ի մասին ես գուցե լավ կանեմ, եթե չուղարկեմ քեզ թղթակցություն կամ եթե ուղարկեմ, դու լավ կանես, եթե չտպես, որովհետև ես չեմ կարող համաձայնվել այն ընդհանուր գովասանքների հետ, որք նրան նվիրում են մնացած պարոնները: Գուցե ես բան չեմ հասկանում, գուցե «քաղաքականությունը» պահանջում է այսպես խոսել, բայց ես չեմ կարող գովել մի կղերական օրգան, որ բոլոր փրկությունը սպասում է եկեղեցուց, կղերից, կաթողիկոսից, էջմիածնից:

Ինձ պ. Salles ուղարկել է երեք համար իր լրագրի և Բեռլին վերադառնալուս պես ես կգրվեմ նրա լրագրին: Գուցե ես սխալվում եմ նրա ուղղություն մասին և դեռ անծանոթ լինելով հայոց հարցի հետ՝ նա բռնել է հիշված գիրքը որ և կթողնի, հենց որ նորան կուղարկվեն ուրիշ ուղղություն ունեցող հոգևածներ: Բայց նրա կղերական ուղղության համար կվկայե մասամբ այն արհամարհական ձևը, որով նա խոսում է իտալական ազատամիտ և հակակղերական կուսակցության վերա, որի համար գուցե մեկնություն կարելի է և նորա մեջ գտնել, որ պ. Salles ֆրանսիացի է և այժմ մոզայի բանն է Իտալիայի դեմ գրել: La plibe Alienne — տառն է նա արհամարհանքով պատմելով Հռոմի մեջ եղած անցքերը, երբ տեղափոխում էին Պիոսի մարմինը և ժողովուրդը իրան իրավունք համարեց բողոքել այդ շքեղ պրոցեսսիայի դեմ և այն պաշտպանողական օրենքների առթիվ, որք հնար են տալիս Վատիկանին ինտրիգներ վարել այն պետության դեմ, որի համբերողությանը նա պարտական է իր այժմյան գոյությունով: Ուրեմն Իտալիան պետք է անդադար տանի և համբերի և ապաստան տա մի հնազաժ և իրան վնասակար ուժին, ուրեմն ժողովուրդն իրավունք չունի չհամբերել պետություն պետության մեջ և պետք է միշտ պատիվ համարի իրան, որ այդ կեղծավոր մարտիրոսները ճնշված հնազաժ պրինցիպի իրան ինտրիգներով և ստորերկրյա միջոցներով գրգռեն ժողովուրդը ընդդեմ ազգային միության և բնական ձգտման դեպի ինքնուրույն կյանքը: Եթե Journal d' Orient արհամարհանքով վերաբերվում է դեպի Իտալիայի ժողովրդի մտքերի ազատ արտահայտությունները, ամբողջ ժողովուրդը, որի քաղաքական տակտը մնացած Եվրոպայի ազգերի տակտից բարձր է, արհամարհական plibe անունով դրոշմելով նրան և հետո հայտնում է, որ նա ընդդեմ է ամենայն տեսակ բռնարարության, թե գերմանացիների կողմից հրեաների դեմ, թե իտալական plibe-ի կողմից հարգելի Վատիկանի դեմ, որովհետև նա հանուն ազատության, քարոզում է համբերողություն—դա կեղծավորություն է և լրագրի իսկական ուղղությունը պահանջում է անկախ մտքի և զարգացման ճնշումն կղերական առաջնորդների ձեռքով: Շնորհակալությամբ ստանում եմ կանոնավոր կերպով «Մշակի» համարները, որ ինձ փոստը հանձնում է Բեռլինից այստեղ: Շատ գեղեցիկ են Նիկողոսյանցի՝ նամակները և մանավանդ հավանում եմ նրանց բազմատե-

սակ նյութը և աներկյուղ լեզուն, որով նա մտրակում է պոլսեցիների անշարժությունը և առերեսությունը:

Շատ գեղեցիկ էր Ասիացու երեկվա ֆելիետոնը:

Իմ փորձերը, «Մշակից» քաղվածքներ անել և Voss. Zeit. մեջ տեղավորել, դժբախտապես ապարդյուն մնացին և առհասարակ Գերմանիայի մամուլը այն պատճառով երևի չէ հետաքրքրվում Հայաստանի հարցով, որովհետև նրա քաղաքականությունը անտարբեր է վերաբերվում դեպի Արևելքը:

1. Նիկողոսյան Գրիգոր (1850—1921)—հրապարակախոս, մասնակցել է 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Հայ ազատագրական շարժմանը մասնակցելու համար բանտարկվել է Կ. Պոլսում: Փրկագնով ազատվելով՝ բնակություն է հաստատել Պետերբուրգում, ապա Մոսկվայում: Խղթակցել է հատկապես «Մշակ» թերթին:

4

25 հոկտեմբերի, 1881

Berlin

... Շատ շնորհակալ եմ քեզանից այն հավաքածուի համար, որ ինձ համար պահել ես Քյուրքճյանի ստերեոսկոպիական պատկերների: Ես վաղուց արդեն մի բան տպած կլինեի Անիի մասին եթե նյութ ունենայի, իսկ նրան քաղել Ritter-ի աշխարհագրությունից ինձ համար չերևցավ, չնայելով որ այսպիսի էր պ. Քյուրքճյանի առաջարկությունը:

Զարմունալին այն է, որ պրոֆ. Զախաու¹ մինչև այժմ չվերադարձրեց ինձ այն պատկերները, որ անցյալ տարի ընծայեց ինձ պ. Քյուրքճյանը և մինչև անգամ չհաղորդեց արձանագրությունների բովանդակությունը: Ես այստեղ ձեռքիս տակ չունիմ ո՛չ հայոց պատմության մի գիրք, ո՛չ Ալիշանի² նկարագիրը, բայց կփորձեմ մի հոդված պատրաստել և դուցե լավ կանեմ, եթե նախքան տպել տամ, քեզ ուղարկեմ և քո կարծիքը լսեմ և քեզանից խնդրեմ, որ պ. Քյուրքճյանը այս կամ այն մանրամասն ավելացնի, եթե ոչ, ետ գցելով բան դուրս չի գա:

Բացի սովորական պարապմունքներիցս ես այժմ սկսեցի գրել մի փոքր նկարագրություն իմ ուրալյան ճանապարհորդության մասին և արդեն երկու գլուխ տվի Voss. Zeit., որ շուտով տպելու է նրանց: Դա բոլորովին մասնագիտական բան չպիտի լինի, այլ մի մատչելի նկարագիր իրար անկախ գլխահարկից բաղկացած...

Ես շատ կցանկանայի և Կովկասի ճանապարհորդությանս մասին մի բան գրեմ, բայց նկատողություններս շատ անկատար են և ես միայն մարշրուտս աչքի առաջ ունենալով և «Մշակի» մեջ տպված նամակներս³, կարող կլինեի գուցե վերականգնել այն ժամանակվա տպավորություններս, բայց վախենում եմ, որ այսպիսի նկարագրություն կենդանի ոճով գրած չլինի և ուրեմն դժվար կկարդացվի: Բայց տեսնե՞ք, գուցե Ուրալի նկարագրությունից վարժված Կովկասիսն էլ ավելի հաջող կլինի քան ես կարծում եմ:

Սորերումս բոլորովին անսպասելի կերպով ինձ նամակով դառնում է պ. Կորշ⁴, նախկին խմբագիր, Пет. Вед., որ այժմ հանձն է առել հրատարակել մի ամսագիր «Заграничный вестник» անունով և առաջարկում է ինձ աշխատակցել նրա ամսագրում պապուլեր բնագիտական հոդվածներ նրան

տալով. ես ընտրեցի էթնոգրաֆիական ու գեոլոգիական նյութեր և արդեն մի հոդված ուղարկեցի նրան, որ և պիտի տպվի երկրորդ տետրակի (նոյեմբերի) մեջ...

1. Զախաու Կարլ էդուարդ (1845—1930)—արևելագետ, Վիեննայի և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր, սեմագետ, ճանապարհորդել է Մերձավոր Արևելքում, փորձել է ճշտել Տիգրանակերտի ավերակների տեղը, գրել է մի շարք մենագրություններ, կատարել թարգմանություններ:

2. Նկատի ունի Ղևոնդ Ալիշանի «Հուշիկը հայրենեաց հայոց» (հ. 1—2, Վենետիկ, 1869—1870) և «Շիրակ» (Վենետիկ, 1881) գրքերը:

3. Այդ նամակ-հոդվածներն են. «Ճանապարհորդական տպավորություններ» («Մշակ», 1873, 18 հունվարի, № 2), «Կովկասի հանքերը» («Մշակ», 1873, 19 դեկտեմբերի, № 51, 1875, 23 հունվարի, № 3, 30 հունվարի, № 4), «Հարստահարողներ» («Մշակ», 1874, 5 սեպտեմբերի, № 35), «Կովկասի արդյունաբերությունը» («Մշակ», 1874, 12 սեպտեմբերի, № 36):

4. Կորշ Ֆեոդոր Եվգենևիչ (1843—1915)—արևելագետ, Մոսկվայի համալսարանի և Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, ակադեմիկոս, զբաղվել է անտիկ դրականությամբ և լեզուների ուսումնասիրությամբ, գրել է մենագրություններ, 1880 թ. Պետերբուրգում հրատարակել է «История всеобщей литературы» ժողովածուն, որի մեջ տեղ է գտել Բ. Պատկանյանի «Очерки истории армянской литературы» հետազոտությունը:

5

26 նոյեմբերի, 1881

<Բեռլին>

Վաղուց է, որ ցանկանում էի «Մշակին» մի նամակագրություն ուղարկել ռախսատագի ընտրությունների մասին, բայց չգիտեմ ինքս ինչու օրեցօր հետաձգելով լսյաքան ուշացրի: Այսօր արդեն հետաձգել անհնարին էր, որովհետև քո նամակն ինձ հիշեցրեց, որ ես խոստումս մինչև այժմ չկատարեցի: Ահա ուղարկում եմ ներփակած մի թղթակցություն որին կհետևեն և ուրիշներ: Այստեղի ընտրությունների ժամանակ պատահեցան մի քանի նկարագրելու արժանի անցքեր, որ և կհաղորդեմ քեզ հետզհետե: ...Իմ պարապմունքներս վատ չեն գնում: Ես այժմ մի մեծ գրվածքի վրա եմ աշխատում—և մի մինեռալոգիական կարթես Ուրալի հրատարակելու, որի համար պիտի տամ և բավական մանրամասն տեքստ—այդ աշխատանքը հետևանք է այն պարապմունքներիս, որ կատարում էի մի տարի շարունակ մոսկովյան համար կարգի բերելով այստեղի չափազանց հարուստ ուրալյան ժողովածուն: Հույս ունիմ այս ձմեռ կարողանամ վերջացնել այս աշխատանքը, որ ավելի մի տեսակ catalogue raisonné կլինի քան թե մի նկարագիր: Ժամանակով կարող կլինեի գուցե նույն բանն անել և Կովկասի վերաբերությամբ, բայց մեզ մոտ եղած նյութը շատ թերի է, իսկ մյուս կողմից Կովկասի մինեռալոգիայի գրականությունը այնքան փոքր է, որ այսպիսի մի աշխատանք հազիվ թե մի ընդհանուր հասկացողություն կտար երկրի մասին: Կովկասի նյութերը ես կնախապատրաստեմ մոնոգրաֆների ձևով հրատարակել...

... Մշակը շարունակ ստանում եմ, նա շատ կանոնավոր է գալիս և զարմանալի բան է, որ ավելի կարճ միջոցում քան թե նամակներս, որ սովորաբար շատ և շատ ուշանում են:

Այս օրերս Վիրխովլ ինձ մոտ էր, նա բերել էր ինձ Տրոյայից եկած քարից շինած գործիքներ, այն նպատակով, որ հետազոտեմ նրանց: Նա Ձեզ շատ և շատ բարև է անում: Նորերս խոսեց Կովկասի մասին, միայն հնագիտական տեսակետից անթրոպոլոգիական ընկերության նիստի մեջ, բայց դարձյալ խոսելու է երբ կստանա այն բոլոր նյութերը, որ հավաքել էր Կովկասի մեջ, մինչև այժմ ուշացրել էին նրանց Թիֆլիսից ուղարկելու և նա հուսահատության մեջ էր, կարծելով որ ամբողջ արկղը կորել է ճանապարհին, բայց վերջապես տեղեկություն ստացավ, որ նոր են ուղարկվել: Աշխարհագրական ընկերության նախագահն էլ նրան խնդրում է մի դասախոսություն կարդալ Կովկասի մասին և նա ինձ խնդրեց, որ եթե մինչև այն ժամանակը չհասնեն նրա նյութերը, ես նրան տամ Քյուրքճյանի Անիի իմ օրինակը, որ նա անպատճառ ուղում է ցույց տալ:

Դու գիտես խո նրա՝ Հոեցենտոֆի հետ միասին, հրատարակվող «*Ge-meinverständliche Vorträge*» և դոցա համար խնդրեց, որ ես գրեմ մի հոդված Կովկասի գեոլոգիայի մասին: Ես իհարկե դրա համար պիտի նյութեր հավաքեմ և ինչ որ կա գրականություն նայեմ: Դա շատ մեծ պատիվ է այդ ժողովածուի մեջ մասնակցել և ես ընդունեցի Վիրխովի առաջարկությունը:

Ես մի թղթակցություն սկսեցի այսօր, թե՛ քաղաքական, թե՛ այլ նորությունների մասին «*Մշակի*» համար, բայց այսօր հաղիվ թե հաջողվի վերջացնել մինչև փոստի հեռանալը, այս պատճառով ստիպված եմ վաղը միայն ուղարկելու: Նույնպես մի փոքրիկ հոդված գծագրեցի Քյուրքճյանի Անիի մասին, որ ուղարկեմ *Voss. Zeit.* Պիտի շտապեմ ուղարկել, քանի որ *Landtag*-ի և *Reichstag*-ի նիստերը դեռ նորից չեն սկսվել, եթե ոչ կրկին կմնա ամիսներով անտիպ ինչպես եղել է իմ Ուրալին վերաբերյալ հոդվածների մասին, որք օգոստոսին գրված, միայն մի քանի օր առաջ տպված: Ես քեզ նրանց չեմ ուղարկել կարծելով, որ քեզ գուցե հետաքրքիր չլինին:

Ինչ որ վերաբերում է այն խնդիրներին, որի մասին հիշել էի անցյալ նամակներումս, դա հետևյալն է՝ ես լսեցի, որ այստեղի Ակադեմիայի կողմից գուցե մի մարդ ուղարկվի Փոքր Ասիա և մանավանդ Հայաստան հետազոտությունների համար և ահա ինձ դիմեցին հարցնելով, թե ինչքան փող պետք է այնտեղ ճանապարհորդելու համար, այսինքն օրը կամ ամիսը ինչքան է հարկավոր հարմարությունը ճանապարհորդելու համար, այսինքն օրինակ երեք-չորս ձի ունենալով, հետո ուտել-խմելը: Ես գիտեմ, որ շատ անգամ ուղղակի վճարել ուտել-խմելու համար չէ կարելի, բայց կարելի է ընծաներ տալ, որ նույնն է: Ես պատասխանեցի հարցնողին, որ տեղեկությունները կաշխատեմ հավաքել և կհաղորդեմ, եղբայր, որ դու այնքան բարի լինես և տեղյակ մարդիկներից իմանաս, եթե կարելի է շուտով տեղեկություն տալ ինձ: Կարծեմ Ռաֆֆին, Քյուրքճյանը կիմանան այդ մոտավորապես: Իհարկե պիտի հաշվել մի ծառա, որ ձիաների մասին կհոգա և հարկավոր ժամանակ կարող կլինի

և հեշտ բաների մեջ օգնիլ: Գուցե ձիաներ առնել ավելի էժան կնստի—սորա մասին կխնդրեի տեղեկանաս: Բայց ինչու երկարացնեմ՝ հարցը դորանում է, թե որքան է հարկավոր օրը կամ ամիսը գիտական մի ճանապարհորդության համար, որի ընթացքում թե՛ գործիքներ պիտի տանել, թե՛ հավաքածուներ: Շատ և շատ կպարտավորիս ինձ տեղեկություն տալով դորա մասին: Նույնպես հետաքրքիր կլինի տեղեկանալ արդյոք վտանգավո՞ր է օրինակ Վանա կողմերը և դորանից արևելք մինչև Պարսկաստանի սահմանը և Ուրմիայի լիճը:

Ներիր եղբայր, որ ես այնքան անհամեստությամբ քեզ անդադար նեղացնում եմ զանազան խնդիրներով—բայց ում կարող եմ դառնալ, ումից ավելի ճիշտ տեղեկություններ ստանալ քան թե քեզանից:

1. Վիրխով Ռուդոլֆ (1821—1902)—գերմանացի երկրաբան, բնագետ, բժիշկ, ճանապարհորդել է Հայաստանում և ուսումնասիրել Հայկական բարձրավանդակի տարածքները, բոլոր երկրների ակադեմիաների անդամ, բազում աշխատությունների հեղինակ, հասարակական և բաղադական գործիչ:

7

24 փետրվարի, 1882

< Բեռլին >

Ես այս անգամ ուղացրի նամակս միայն այն պատճառով, որ ուզում էի միևնույն ժամանակ ուղարկել «Մշակի» համար և մի թղթակցություն, որ ահա ուղարկում եմ ներփակյալ: ...Ես հույսով էի, որ այդ գրքերի մեջ կգտնեմ մի քանի տեղեկություններ Վովկասի վուկանական մասերի վրա, ինչպես Ալեքսանդրապոլի, Երևանի, Սևանա և այլն շրջակայքի մասին, բայց երևում է, որ այդ պարոններից ոչ մեկը կամ չէ հետաքրքրվում հրաբխական կազմություններով, կամ վարժ չէ նրանց հետազոտության մեջ, որովհետև և նրանց նկարագրած բաժինները, ուր որ պատահել են այսպիսի կազմություններին, շատ թերի և անկատար կերպով են նկարագրել: Ուրեմն մնում են դարձյալ միայն Աբխի¹ գրվածները այս մասերի վերա և մի կարճառոտ նկարագրություն, որ արել են այստեղ երկու գեոլոգներ այն նյութերի հիման վրա, որ բերել էին Եվրոպա էոնեստ Ֆավր և Օսկար Շնայդեր²: Անիի իմ հետազոտությունները ուրեմն, ինչպես երևում է, բոլորովին նոր բան կլինեն, որովհետև որքան ինձ հայտնի է, Աբխիս էլ ոչինչ բան չէ հրատարակել այդ տուֆերի մասին: Եղբայր, ներիր եթե կրկին հիշեցնում եմ խնդիրքս, որ հաղորդես ինձ Բեռլինից հայերեն անունը: Ուր է պ. Քյուրքճյանը, դժբախտապես ես չստացա նորանից խոստացած Անիի շրջակայքեն հավաքած քարերի տեսակները:

Ես այս օրերս վերջացրի մի շատ հետաքրքիր փոքրիկ աշխատանք եգիպտական վուկանական քարերի տեսակների վերա, որք ինձ այն պատճառով մանավանդ հետաքրքրում էին, որովհետև նրանք մի գծի վերա են գտնվում նույն տեսակների հետ Փոքր Ասիայում և Սիրիայում: Եթե գիծը սկսել կայիրայի և Սուեզի մեջ, տանել դեպի Հաուրան լեռները Սիրիայում և շարունակել նույն ուղղությամբ, գիծը կանցնի Ալեպպոյից արևելային կողմը, կհասնի էրզրումի մոտով մինչև Ախալքալակ: Այդ վերջին կետից ես մոտս ունիմ բոլորովին համանման մի տեսակ և միայն պակաս է էրզրումից մի օրինակ, որի մասին գիտեմ միայն Պետր Չիխաշովի³ նկարագրությունից: Երեկ այդ փոք-

րիկ աշխատանքս ներկայացրին այստեղի Ակադեմիային: Ախալքալակի մասին դեռ ոչինչ չկա մեջը, բայց ես հույս ունիմ շուտով Կովկասի տեսակների մասին խոսելու մի այլ աշխատությանս մեջ և այն ժամանակ կհիշեմ այդ:

Խնդրեմ մի ղարմացիր, եղբայր, որ ես այսօրվա թղթակցությունս չեմ ստորագրում իմ անունով, դորա համար առանձին պատճառ կա, որ առժամանակ անհամար է հայտնելու, կարդացողը այնուամենայնիվ երևի կիմանա թե ես եմ գրողը, թեև տակը մի աստղ դրած լինեի, բայց խնդրեմ այսպես արա և անունս մի ստորագրիր տակը:

1. Արիի Հերման Վիլհելմ (1806—1886)—գերմանացի երկրաբան, ճանապարհորդ, Պետերբուրգի դիտությունների ակադեմիայի անդամ, Դորպատի համալսարանի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, հետադոտել է Կովկասը և հատկապես Հայկական լեռնաշխարհը, ունի բազմաթիվ մենագրություններ, այդ թվում նաև Հայաստանի մասին:

2. Օսկար Շնայդեր—գերմանացի երկրաբան, ճանապարհորդ է Հայաստանում և գրել աշխատություն այդ մասին:

3. Ջիսաշով Պետեր (Պլատոն—1808—1890)—ռուս աշխարհագրագետ, երկրաբան, ճանապարհորդ, ուսումնասիրել է Հարավային Իտալիան, Ֆրանսիան (Նիցցա), Ալտայի երկրամասը, Հյուսիսային Աֆրիկան և այլ տարածքներ, ունի բազմաթիվ մենագրություններ, ղեկավար է Արևելքի բաղադական հարցերով:

8

20 ապրիլի, 1882

<Բեռլին>

... Նամակիս ուղանալու պատճառները անթիվ են. նախ ես այնքան լավ չէի գիտեմ ինձ, երկրորդ անգամից վաղված էի և ստիպված էի աշխատել, շնայելով որ մի սաստիկ հազ տանջում էր ինձ: Բայց մեկ էլ պատճառ այն էր, որ քեզ այս նամակովս ուղում էի և մի նորություն հաղորդել, որ քեզ գուցե պիտի ուրախացնեի, բայց գոնյա, անկասկած կհետաքրքրեի:

Բանը հետևյալումն է. այստեղի Ակադեմիայի ձեռքում կա մի մեծ գումար, որ Humboldt-Stiftung անունն է կրում և որի տոկոսներով (տարեկան 12000 մարկ կամ 6000 ռուբլի) գիտական նպատակներով ճանապարհորդներ են ուղարկվում հեռավոր երկրներ: Հետազոտության նպատակը միայն բնագիտական է, ինչպես ինքնըստինքյան հասկանալի է այն անունից, որ տվել են գումարին: Արդեն մի քանի տարի է, որ այս գումարի տոկոսներով ճանապարհորդում է մի պարոն Finsch, որի անունը քեզ գուցե հայտնի է Բրեմի սիբիրական ճանապարհորդությունից: 1876 թվին, Finsch և էլի մի պարոն ուղեկցում էին Brehm-ին այդ ճանապարհորդության ժամանակ: Finsch-ը իսկապես ավելի ժողովող (Sammeler) է քան թե գիտական հետազոտող և բացի սորանից Ակադեմիան նրա այժմյան գործունեությունից շատ դժգոհ է և շատ ցանկանում են նրա վերադարձը:

Այսպիսի պայմաններ դրեցին Ակադեմիայի մի անդամին, որ գիտեի իմ հակումը դեպի ճանապարհորդությունը, ինձ խրատ տալ, որ ես մի գիտական արշավանք: Նախագիծ առաջարկեմ Ակադեմիային: Ես այսպես էլ արեցի (և որովհետև պետք է նշանակեի նույնպես գումարի բարձրությունը, այս պատճառով էլ դիմեցի քեզ, որ տեղեկություններ հավաքես, թե որքան արժե ճանապարհորդելը Հայաստանում): Իբրև մի հարց, որ հետաքրքիր կլինեի

հետազոտել, ես նախագծիս մեջ անվանեցի Վանի շրջակայքը, շենտեցի որ Վանի լճակի գծագրությունն էլ մինչև անգամ անհայտ է ճշտությամբ, որ վուկանական այն բոլոր երկիրը, որ տարածվում է Վանի և Ուրմիայի լճակների մեջ և հասնում է մինչև Արարատ՝ գրեթե անհայտ է գիտության համար: Բոլոր գեոլոգները... միաձայն համակրություն ցույց տվին իմ արշավանքի նախագծին... Միջազգային գեոլոգիական կոնգրեսը, որ այս տարի հավաքվել էր Բուլոնիայի մեջ, վճռեց հրապարակել մի գեոլոգիական կարթեզ ամբողջ Եվրոպայի, բայց այդ շրջանակը պիտի մտնի և Հյուսիսային Աֆրիկան, Իսլանդիան և վերջապես կենտրոնական Ասիա մինչև Արալի ծովը, իսկ մանավանդ ամբողջ Փոքր Ասիա: Այս քարթեսը պատրաստելու համար կոնգրեսը ընտրել է պրոֆ. Բայտշիխին, որ այստեղ է և միևնույն ժամանակ անդամ է ակադեմիայի: Նա ինքն էլ, որին ես դեռ խոսած չէի իմ նախագծի մասին, իբր թե իրանից նույն առաջարկություն արեց ինձ—մի խոսքով ես չէի կասկածում որ բանը պիտի հաջողվի:

Նորերս նիստ կայացավ Ակադեմիայի մեջ և իմ առաջարկություն մեջ բերվեցավ—գեկուցանողը իր և չորս ուրիշ անդամների անունով խոսեց իմ առաջարկության համար: Բոլոր ուրիշ առաջարկությունները մերժվեցան և ես մնացի առանց հակառակորդ—բայց և ինձ չվիճակվեցավ հաղթող դուրս գալ: Պատճառը շատ պարզ է, Finckh դեռ չի վերադարձել և նորա համար պիտի պահեն գումարի մի մասը, իսկ մնացողը բավական չէ իմ նպատակին: Du Bois-Raymond-ի առաջարկությամբ վճռվեցավ, որ այս տարի Humboldt Stiftung փողով ճանապարհորդություն չի լինի և այս գումարը կմնա մինչ մյուս տարի: Նիստից հետո ինձ ակնարկեցին, որ ես եկող տարի դարձյալ պիտի նույն առաջարկությունն անեմ և անկասկած կնդունվի դա: Այդ միջոցին ես ավելի հանգիստ կարող եմ պատրաստվել այդ նպատակի համար և այն, ինչ որ այժմ էլ պիտի անեի աշխարհագրական կետերի որոշումն ավարտել (geographische Ortsbestimmung, այսինքն թե որ լայնության և երկարության աստիճանի վրա է գտնվում մի կետ), կարող եմ ավելի մանրամասն, ավելի կատարյալ կերպով ուսումնասիրել: Բացի սրանից, եթե այս օգոստոսին երթայի, կարող կլինեի միայն երեք ամիս գործածել հետազոտության համար, իսկ եթե եկող տարի մարտ ամսին ճանապարհ ընկնեմ, այն ժամանակ հեշտությամբ կարող եմ նվիրել գործիս վեց ամիս կամ էլ ավելի: Պիտի սովորեմ նույնպես և ուրիշ ամեն տեսակ մեթոդներ, որք ինձ կարող են պետք գալ և մանավանդ կատարելապես մշակել ամբողջ եղած գրականությունը այդ երկրների մասին:

Այդ վերջին նպատակի համար դու ինձ շատ կպարտավորեցնեիր և մեծ օգնություն կանեիր, եթե կարողանայիր ինձ համար գնել Միանսարյանցի Bibliographia², որի մեջ կարծեմ շատ լիակատար կերպով նշանակված են այն բոլոր գրքերի և հոդվածների անունները, որք վերաբերվում են Հայաստանին: Դորանով շատ կնպաստեիր իմ նպատակիս: Ես դիտավորություն ունիմ իբրև օգնական հետս առնել մի ֆոտոգրաֆ և արդեն մտածեցի Քյուրթճյանին առաջարկել ընկերանալ ինձ հետ այդ ճանապարհորդության համար: Ի՞նչ տեսակ վարձատրություն ես նրան կարող եմ դորա համար առաջարկել ես դեռ չգիտեմ, բայց կարող եմ խոստանալ, որ նրա համար պետք եղած

ապարատներ և նյութեր ինձ հանձնելու գումարից պատրաստ եմ առնել: Իմ նշանակված գումարը իհարկե այնպես է, որ նորանից ոչինչ չի մնա երբոր հետադուրսությունները վերջացրած կլինին, ուրեմն իմ վարձատրությունը կլինի այն, որ ինձ առիթ տվին ձրիապես հետազոտել մի երկիր, որ ինձ հետաքրքիր է: Նայելով թե ինչպիսին կլինի ամբողջ գումարը, գուցե լինի դա պ. Քյուրքճյանն կամ մի այլ ֆոտոգրաֆ, որ հետո կլինի, նմանապես հրաժարվի վարձատրությունից և կվայելի միայն այն, որ այստեղի ակադեմիայի հաշվով առիթ կունենա տեսնել և հետազոտել մի երկիր:

Դու կարող ես քեզ ուրեմն երևակայել, եղբայր, որքան զբաղված եմ ես այժմ: Շարունակել իմ առօրյա աշխատանքները, շարունակել մշակել իմ ուրալյան նյութերը և միևնույն ժամանակ սկսել սովորել զանազան նոր մեթոդներ այստեղի աստղաբաշխական դիտանոցի վերա, բայց միևնույն ժամանակ ծանոթանալ մանրամասնաբար և գրականության հետ: Հույս ունիմ առողջությունս կդիմանա այդ բոլոր աշխատանքին:

1884 թվին այստեղ պիտի հավաքվի միջազգային գեոլոգիական կոնգրեսս և ես եթե 1883 թվի նոյեմբերին այսինքն վերադարձած լինեմ այստեղ, ժամանակ կունենամ մշակել մասամբ իմ տեսածը և հավաքածը, նույնպես իմ օրագիրը (Tagbücher) կարգի գցել և մի գեկուցում կտամ գեոլոգներին: Վերջացնում են նամակս, այսօր այսքան միայն, ես մի առաջարկություն էլ ունիմ անելու, որ գուցե հոգվածի ձևով կուղարկեմ «Մշակի» համար...

Եթե պայմաններ հաջող լինեն այս տարի գուցե ես Կովկաս կգամ և գրել-խավորապես այն նպատակով, որ նախապատրաստական հետազոտություններ անեմ Արարատի շուրջը, այսինքն սկսելով Ալագյազի և Սևանա ծովից մինչև Անիի և Կարսի կողմերը, Արարատը և Պարսկաստանի սահմանը, այն բոլոր տարածության վրա, ուր գտնվում են հրաբխական կազմությունները (Vulkanische Bildungen) բայց այդ դեռ հաստատ չէ...

1. Բրեմ Ալֆրեդ էդմունդ (1829—1884)—գերմանացի կենդանաբան, ճանապարհորդել է Աֆրիկայում, Արևմտյան Ավստրալիայում, Սիբիրում, գրել է «Կենդանիների կյանքը պատկերազարդ» (1—6 հ., 1863—69):

2. M. Miansarof, Bibliographia, Sections I et II, St. Petersbourg, 1874—1876.

Դու չես կարող երևակայել որքան ծանր է ինձ, որ ես փոխանակ այս ամառը քեզ մոտ գալու ստիպվեցա այստեղ, Գերմանիայում մնալ և տեղափոխվել St. Andreasberg փոքր քաղաքը, Հարց սարերում ամենաբարձր տեղերից մինն է: Ես արդեն մի քանի օր է, որ այստեղ եմ... Ես քեզ գրել էի մի քանի ամիս առաջ, որ այս ամբողջ ձմեռը սաստիկ աշխատեցի, բայց այդ այնքան չվնասեց ինձ, որքան գարնան մոտենալուն պես իմ սաստիկ մրսելս... Բժիշկը ինձ խրատեց գնալ լեռների մեջ անցկացնել 6 կամ 8 շաբաթ:

... Ես ոչ թե այն պատճառով գլխավորապես վճռեցի հետևել Բեռլինի բժշկի հրամանին, փոխանակ քեզ մոտ գալու, որ ինձ շատ թանգ է առողջությունս կամ կյանքս, այլ եկող տարվա նպատակս Վասպուրականը հետազոտելու համար, № 4

տեղում աչքի առաջ ունենալով: Մինչև այս նպատակիս իրագործելը դեռ մի երկար և ծանր պարապմունքով ձմեռ ունեմ իմ առաջ և ուրեմն պիտի աշխատեի ույժերի բաղկացուցիչ պաշար հավաքել, իսկ այդ կարող էի անել միայն այժմ, այդ արձակուրդներին: Եթե այդ շանհի, եթե Humboldt Stiftung-ի վարչության մեջ օրինակ այն կարծիքի լինեին, որ ես բավական առողջ չեմ, որ կարողանայի դիմանալ այսպիսի ճանապարհորդության, ես իհարկե չէի կարող էլ հուսալ, որ իմ նպատակիս կհասնեմ և դա ինձ համար, հավատացիր, մի անասելի զարկ կլիներ: Ինչպես և լինի ես պետք է կրկին բոլորովին նորոգեմ և հավաքեմ ուժերս և եթե էլ լինին արգելքներ Humboldt Stiftung-ի կողմից ես անպատճառ միջոց կգտնեմ մարտի կեսումը կամ վերջումը ճանապարհ ընկնել դեպի Վան: Ես պիտի աշխատեմ այդ իրագործելու համար որքան կարելի է ազատվել կողմնակի պարապմունքներիցս և աշխատանքներիցս ձմեռվա ժամանակ, որ կարողանամ որքան կարելի է կատարյալ կերպով ուսումնասիրել հարցը և պատրաստված լինել այդ ճանապարհորդությանն ից որքան կարելի է շատ օգուտ քաղել: Այդ վերջին ժամանակները Աբիխի մի մեծ գիրք դուրս եկավ, որ գեոլոգիական նկարագիր է Հայաստանի բարձր հարապարակի մի մասի և ամփոփում է թյուրքաց Հայաստանի հյուսիսային և արևելյան մասը, բայց չէ հասնում դեպի հարավը, մինչև Վասպուրական երկիրը: Դա իմ նպատակներին շատ նպաստող մի աշխատանք է և ես այժմ այստեղ զբաղված եմ նրան ուսումնասիրելով: Ես շատ բանում Աբիխի տեսությունների հետ համաձայն չեմ, բայց ինձ համար նշանակություն ունին նրանից հավաքած իրողությունները, որոնց ճշտության մասին ես ոչ մի կասկած չունիմ: Հենց որ ավելի առաջ գնացած կլինի իմ ալս գրքի հետ ծանոթությունը, ես դրա մասին մի թղթակցության ձևով իմ կարծիքը կհայտնեմ «Մշակի» մեջ:

Եղբայր, ես գտնում եմ, որ մեզ մոտ առհասարակ բավական չեն զբաղվում մեր երկրով և բավական ուշագրություն չեն դարձնում այն հետազոտություններին վերա, որ օտարներից են կատարվում: Իմ ձեռքս ընկավ նորբոս Թիֆլիսի աշխարհագրական ընկերության հրատարակությունների մի տետրակ (X), որի մեջ գտնում եմ շատ հետաքրքիր տեղեկություններ Կովկասի այլևայլ մասերի վերաբերությամբ և որը մեզ մոտ, մեր լրագրության մեջ բոլորովին հիշված չեն եղել: Չէ՞ր կարելի արդյոք, որ մեկը, օրինակ, այսինքն, Սաղաթելյանը, որ ռուսերեն լավ գիտե, հանձն առնել «Մշակի» համար տեղեկություններ տալ կամ քաղվածքներ անել այս հոգվածներից: Արդեն մեծ ծառայություն մատուցած կլինեի «Մշակը», եթե գոնյա կարճ կերպով հաղորդեր ամեն տեսրակի երևալուն պես, դրա բովանդակությունը: Միայն աշխարհագրական ընկերություն չէ, որ հոգվածներ է հրատարակում Կովկասի մասին, գոնյա պիտի բովանդակությունը հիշվեր և այն հատորների, որը կարծեմ անուն են կրում «Сборник сведений о Кавказе», որքան էլ թույլ կամ անկատար լինին հոգվածները—եւ անձամբ այնքան ծանոթ չեմ այդ հրատարակությունների հետ, որ սեփական դատողություն ունենամ նրանց մասին—այնուամենայնիվ նրանք են, որք առ ժամանակ կազմում են հիմք Կովկասի գիտական ծանոթության համար, իսկ իմ կարծիքով մի երկրի առաջադիմության գլխավոր պայմանը այն է, որ նրա հետ ավելի մոտիկ ծանոթու-

թյունը որքան կարելի է ընդարձակ տարածություն ստանա: Մեզ մոտ հիմնվում են անթիվ ընկերություններ, իսկ միներ, որ իմ կարծիքով ամենաշատ ազդու կգործեն, կլինեն մի տեսակ «Vaterlandischer Verein», որի համար նպատակ պիտի դնեն բազմակողմանի տեսակետներից ուսումնասիրել երկիրը, նյութեր, դրական նյութեր հավաքել երկրի մասին, որի հիման վրա կարող էր առաջ գալ և ապագա զարգացումը: Պատմությունը, աշխարհագրությունը, գյուղական կյանքը, տնտեսությունը, հնագիտական իրողությունների հավաքելը, գեոլոգիան, ստատիստիկան և հազար ու մեկ ուրիշ հարցեր կարող էին զբաղեցնել այսպիսի մի ընկերության: Եվ որքան էլ անգիտնական կամ անկատար կլինեին սկզբները, այնքան մեծ նշանակություն անկասկած կունենար մի այսպիսի ընկերություն ազգային վերածնության համար՝ նա կծանոթացներ Կովկասը իր սեփական հողին և անցյալի հետ—իսկ դա է իմ կարծիքով մի հիմք ներկան ճանաչելու և ապագային մի որոշ, ազգային ուղղություն տալու համար: Լրագրությունը չի կարող իրան նպատակ դնել այս հարցերին ծառայելու՝ նա այլ կերպ զարգացուցիչ է ազգի համար, զբաղվելով օրական հարցերով: Բայց մի մեծ նպաստ չէ՞ր գործի արդյոք այսպիսի ընկերության և լրագրությունը, նրան նյութեր ներկայացնելով, որից նա կարող էր եղրակացություններ դուրս բերել, նրանց վերաբերելով ներկայի կյանքին: Ես երբեմն անընդունակ եմ ինձ զգում հոգվածներ գրելու, և դու ինձանից լավ գիտես ազդել քո խոսքով: Եթե համակրում ես իմ հայտնած մտքերին, գուցե առիթ կունենաս այդ միտքը «Մշակի» մեջ հայտնելու: Եթե այդ միտքը պատահամբ իմ մեջ ծնվեցավ, նա այնուամենայնիվ իմ սեփականությունը չէ, և եթե նա օգտավետ է, ընդհանուր սեփականություն պիտի դառնա: Առհասարակ մեզ մոտ շատ նյութեր կան դիզված, նրանց շատ անգամ պետք է միայն կարգավորել, ամփոփել, ընդհանրացնել... Եվ որքան բարոյականացնող ազդեցություն պիտի գործեն ժողովրդի վերա այսպիսի հարցերով զբաղվելը, նրա մեջ զարգացնելով հետաքրքրություն դեպի նոր հարցեր և հետաքննելով շատ անգամ ասարդդուն, ունայն վեճերից, որոնք ոչ թե գաղափարների վերա են հիմնվում, այլ անձնական տեսակետից դրված են լինում:

Ես գուցե մի տեսակ ուսուպիայի եմ հասել իմ եղրակացություններովս, բայց կարծում եմ, որ ապագայում այդ բարոյականացնող ազդեցությունը անկասկած պիտի զգալի դառնար:

Ուղարկում եմ սորա հետ մի փոքրիկ զեկուցումն Վիրխովի ցեղազրկան մի դասախոսության մասին, որ եթե հարմար դատես, գուցե տպել տաս «Մշակի» մեջ: Ինչպես առիթ ունեցա հաղորդելու քեզ, ես ուշացրի այդ նամակագրությունս շատ զբաղված լինելու պատճառով, հույս ունիմ դա նշանակություն չպիտի ունենա, եթե մի շաբաթով ուշացավ: Անկասկած այսպիսի նյութ այնքան ընդհանուր հետաքրքրություն չպիտի շարժի ինչպես գուցե կարող էր անել անցյալ նամակիս նյութը: Բայց դա այնուամենայնիվ գիտություն միջոցով գրած եղելություններ են, որ մեր երկրին են վերաբերվում և ուրեմն, իմ կարծիքով, պետք է այնտեղ նյութ դառնան...

Շնորհակալությամբ ստացա 8/20 օգոստոսի գրած նամակդ և նմանապես «Մշակի» այն համարը, որի մեջ այնքան բարի եղար թարգմանել իմ նկատողությունը Voss. Zeit. թղթակցի վերաբերմամբ: Շատ գեղեցիկ ես թարգմանել, եղբայր:

Այսօր սրա հետ միասին ուղարկում եմ քեզ նույն թղթակցի պատասխանը իմ նկատողության առիթով: Ես կարծում եմ, որ դուրա մեջ էլ մի սխալ է մտել, ուր որ նա խոսում է պատրիարքի տեղապահի և նրա հրաժարականի մասին: Եթե բանը այդպես լիներ, «Մշակի» Պոլսի թղթակիցներից մինը կամ մյուսը դուրա մասին անկասկած տեղեկություն տված կլիներ: Ես էլ չեմ խոսում, որ Voss. Zeit. թղթակիցը խառնել է անուններ և տեղապահին խրիմյան (?) և անվանում: Ինչևիցե, նա քաղաքավարի կերպով ետ է առնում իր մեղադրանքը և իր առաջին սխալը ուղղելու համար գովասանքներ է շուրջում ներսես պատրիարքին:

Բացի այս կտորից, նամակիս մեջ կգտնես էլի երկու կտոր, որք նմանապես Պոլսի նամակներ են առ Voss. Zeit. և որք զուրկ չեն հետաքրքրությունից «Մշակի» ընթերցողների համար գուցե:— Ինչպես երևում է այժմ սկսում են փոքր-ինչ ավելի ուղադրություն դարձնել հայոց զրության վերա: Եթե էլի հանդիպեմ այսպիսի հոգևածների, անպատճառ կուղարկեմ քեզ կտորները: «Մշակի» վերջին ստացած համարների մեջ ես ուրախությամբ կարդացի քո երկու հոգևածները՝ «Անմիտ մեղադրանք» և «նավարասներ մամուլը»: Անկեղծությամբ շնորհավորում եմ քեզ այդ ուժեղ և mitwürde գրած հոգևածների առիթով:— Առհասարակ «Մշակը» շատ լավ է: Քեզ գուցե հետաքրքիր կլինի իմանալ, որ ես այստեղ ծանոթացա դր. Լաուերի՝ հետ, որ հրատարակել է հայոց քերականությունը գերմաներեն լեզվով և նմանապես Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդացու թարգմանությունները: Նրա քերականությունը, ինչպես նա ինձ պատմում էր, նորերումս թարգմանվեցավ ֆրանսերեն և երկրորդ աշխատությունը պիտի գերմաներեն էլ լույս տեսնի շատ փոփոխված և ուղղված: Պ. Լաուեր արդեն պատրաստ ունի Զենոբ Գլակի և Հովհաննես Մամիկոնյանի գերմաներեն թարգմանությունները և գիտավորություն ունի, եթե ժամանակը նրան ներե, շուտով ձեռնարկել հայոց դրականություն պատմությունը, բայց ոչ ամբողջ, այլ գլխավորապես Արշակունյաց ժամանակից և մտադիր է շարունակել նրան մինչև VI կամ VII դար... Նա շատ հետաքրքիր մարդ է և ես շատ հավանեցի նրա ոգևորված ձևը խոսելու և նրա եռանդուն խոսքը: Իմ մասին մի քանի խոսք: Ես ինձ այստեղ շատ լավ եմ զգում և բժիշկն էլ շատ գոհ է իմ դրությունով, այնպես որ ես այստեղ մի քանի շաբաթ էլ մնալով, հույս ունիմ բուրդովին առողջ վերադառնալ Բեռլին: Ես առժամանակ շատ քիչ եմ պարապում, ավելի ման եմ գալիս և կամ առհասարակ դուրս եմ լինում, որ մանավանդ այժմ հարմար է, երբ ավելի մեղմ եղանակներ են սկսվել, քան թե էր երկու առաջին շաբաթները: Ինչպես երևում է անձրևները դադարել են և ավելի լավ եղանակներ պիտի կրկին սկսվեն...

1. Lauer M.—ունի մի շարք հայագիտական աշխատություններ, օրինակ՝ «Grammatik der classischen armenischen Sprache», Wien, 1869. „Moise de Khorène. Des Moses von Chorene Geschichte Gross-Armeniens. Aus dem armenischen übersetzt“ von Dr. M. Lauer, Manz, 1869. „Faustus de Byzance. Geschichte Armeniens. Aus dem armenischen übersetzt und mit einer Abhandlung über die Geographie Armeniens eingeleitet von Dr. M. Lauer, Köln, 1879 և այլն:

11

27 հունվարի, 1883

<Բեռլին>

... Կարծեմ ես քեզ պատմում էի, որ համալսություն կար որ ինձ Breslau կանչէին իբրև Extraordinar professor. Այդ աշխատքի վճարած բան է, միայն մինիստրությունից տեղեկություն չեմ ստացել, որ օրից օր սպասում եմ: Breslau-ի ֆակուլտետը ինձ առանձին կերպով պատվեց՝ առաջարկելով ինձ իբրև միակ կանդիդատը, թեև սովորություն է ներկայացնել մինիստրությունը երեք անուններ, նրան միջոց տալով դրանց մեջ մեկին ընտրելու: Ամեն կողմից համարում են գործը կատարելապես վճարած և՛ Breslau-ից եկած նամակներից ես եզրակացնում եմ, որ զատկին ինձ արդեն այնտեղ սպասում են: Մինիստրից վճիռը գալուն պես քեզ դարձյալ տեղեկություն կհասցնեմ: Նյութապես իմ դրությունս այնտեղ առավել լավ լինելու չէ քան թե այստեղ, ոտնիկը տարեկան 120 մարկ (!) զանազանությամբ նույնն է մնում, իսկ դորա փոխարենը իհարկե ավելի քիչ կստանամ լսողներից, որք անկասկած առավել փոքրաթիվ՝ են այնտեղ, բայց կյանքն էլ ասում են փոքր ինչ ավելի աժան է քան այստեղ: Այս նյութական կողմն է: Մյուս կողմից ես այնտեղ պետք է հրաժարվեմ բազմակողմանի հարաբերություններից, որ ունիմ այստեղ, օրինակ՝ աշխարհագրական և անթրոպոլոգիական ընկերությունների միջնորդությամբ: Բայց ուրիշ կողմից այնպիսի ծանր պարտավորություններից էլ ազատ կլինեմ, որք ինձանից այստեղ խլում էին իմ բոլոր ժամանակս և անհնարին էին դարձնում իմ սեփական աշխատանքներիս հետևել: Այնտեղ ես միայն 4—6 ժամ դաս կարդալու կունենամ շաբաթվա ընթացքում (որ այստեղ էլ անում եմ), իսկ մնացած ժամանակը կատարելապես իմ պարապմունքներիս կարող եմ նվիրել...

12

13 հոկտեմբերի, 1883

Breslau

Երեկ գալով այստեղ ես քեզ իսկույն հեռագիր ուղարկեցի, որպեսզի դու անհանգիստ չլինես իմ երկար լռության մասին: Հեռագրիցս տեղեկացած կլինես, որ ես բոլոր ուղարկածդ համարները («Մեղու», «Արձագանք», «Тифл. обозр.») ստացա, իսկ երեկ գալուս պես հասան քո նամակդ, «Մշակի» մի քանի համարներ և իմ դասախոսության օրինակները: Բոլորի համար անշափ շնորհակալ եմ, իսկ մանավանդ այն քնքույշ համակրությանդ համար, որ արտահայտում ես ինձ նամակիդ մեջ: Իմ սիրտս լի է շնորհակալությամբ քո բարոյության և սիրո համար և նույնպես թե՛ քո, թե՛ Մարիամի սիրալիր

վարմունքի և համակրության համար, որ ինձ բոլոր ժամանակ անպակաս ցույց տվիք և որի արտահայտությունով լի է ներկա նամակդ:

Ինչպես քեզ ասել էի, ես Պետերբուրգով ճանապարհորդեցի դեպի այստեղ և այս է միակ պատճառը, որ իմ այստեղ գալս մի քանի օրով ուշացավ: Այստեղ լինելովս շուրջ Գուրգենի թաղման կամ ձիշտ ասել՝ հուղարկավորության հանդեսը տեսած չլինելով: Ես դուրս եկա այդ օրից մյուս առավոտը:

Նախքան եղավ հանդեսը, ես առիթ ունեցա «Մշակից» նվիրված պսակը տեսնելու և գտա նրան շատ ուրիշներից ավելի շքեղ, ավելի ճաշակով շինած: Դափնյա և այլ տերևների մեջ գտնվում էին վարդեր և կամեղիաներ: Նա երկար ժամանակ նսկի մի խանութի պատուհանի մեջ էր դուրս դրված ինչպես և շատ ուրիշ պսակներ և նմանապես ձգում էր անցուդարձների հետաքրքրությունը, ինքն հանդեսը ես տեսա փողոցի վերա կանգնելով: Իհարկե կարող էի պ. Յաղուբյանին՝ դիմել և պսակը նրա հետ միասին տանել, մանավանդ, որ ամեն մի պսակի հետ թույլ էր տված 6 մարդիկներին գնալ, բայց ես նախապատվեցի այդ շանել, վախենալով, որ կարող եմ մրսել այդ ցրտին առանց գլխարկի գնալով և այս պատճառով շփացի էլ Յաղուբյանի մոտ, ես մի քանի բան ունեի նայելու հրապարակական ընթերցարանի մեջ իմ ուրախյան աշխատանքի համար և այնտեղ մի քանի ժամ ամեն օր անց էի կացնում: Գոնե ինստիտուտի պարոնները ինձ առաջարկում էին հանձն առնել մի ճանապարհորդություն դեպի Խիվա և Մերվ, եթե կհաջողացնեն մինիստրությունից (путей сообщения) բավական մեծ գումար ստանալու և ասում էին, որ եթե այդ գումարը 4—5000 չլինի, ես չպիտի ընդունեմ: Ես ոչինչ վճռական պատասխան չտվի և դեռ նրանցից սպասելու եմ առավել հաստատ տեղեկությունների: Եթե Հայաստանի ճանապարհորդությունս կրկին չպիտի հաջողեցնեն Բեռլինի ակադեմիան, ես այն ժամանակ այդ ճանապարհորդությունը հանձն կառնեմ և գուցե արդեն մարտ ամսին Թիֆլիսով կանցնեմ, որովհետև Կրասնովոդսկի ճանապարհը ընտրեցի, բայց դա դեռ կտեսնենք: Ես առավել գոհ չլինեի, եթե Բեռլինի ակադեմիայի բանը հաջողվեր, որի մասին ամենավաղը հունվարին կարող եմ մի փոքր ի շատե հաստատ վճիռ լսել:

Շատ և շատ շնորհակալ եմ սիրելիս այն նկատողության համար, որ տվիր «Тифл. обзор», ես չեմ կասկածում, որ քո գրածն է դա: Գուցե վաղը եթե ժամանակս ների «Մշակի» համար կուղարկեմ մի փոքրիկ պատասխան թե՛ «Մեղուին», թե՛ «Արձագանքի» հոգվածներին, թեև գտնում եմ, որ նրանք երկուսն էլ անսպասելի համակրությամբ վերաբերվեցան դեպի ինձ:

... Իմ ճանապարհորդությունը առհասարակ շատ հաջող անցավ, մինչև Բաթում հասնելը շատ շոգ էր... Բաթումից մինչև Իտալիա բավական հանգիստ էր, իսկ այդտեղ ծովը սկսեց բավական ալեկոծվել: Ծանապարհին ես կարդացի գրեթե բոլոր Բաթիից ինձ ընծայած նրա գրքերը՝ «Խաչադողի հիշատակարանը», «Դավիթ Բեկի» երկու հատորները, «Խենթը»: Մի քանի տեղեր ճշմարիտ շատ լավ են. հաջողվում են նրան, մանավանդ, թե՛ բնության, թե՛ դրությունների (situation) նկարագրությունները, իսկ պսիքոլոգիականը՝ շատ անգամ թույլ է, որովհետև ոչ մի բնավորություն մնում է առանց իրան իրան հակառակվելու, այնպես որ շատ անգամ նրա հերոսների վարմունքը նախագուշակել չէ կարելի situation-ի հետ առաջուց ծանոթ լինելով: Ես

գլխումս մի հողմած պատրաստ ունեի Կովկասի տնտեսական դրություն մասին. երբ կվերջացնեմ կտպեմ, կուղարկեմ քեզ: Ես գտա այստեղ և լ. Տիգրանյանի ուղարկած երկար նամակը, որի մասին երկաթուղու կայարանում իմ դնալու ժամանակ հիշում էր Քյուրքճյանը: Տեսնեմ ինչ անելու է—դեռ չեմ կարողացել: Ես նրան հետո կգրեմ դուրա մասին:

Իմ հողմածս Nephri-ի մասին տպված դուրս եկավ, բայց առանձնատիպերը (Separatabzuge) դեռ չեմ ստացել. երբ կստանամ կուղարկեմ: Սկզբի ընդհանուր մասը գուցե կկարդաս, գուցե կհետաքրքրի այդ ընդհանուր ազգադրական հարցը: Իմ Քիլ կանչվելու մասին ոչինչ դեռ հաստատ բան չկա: Այնտեղի նախկին պրոֆեսորից, որ իմ մոտիկ ու անկեղծ բարեկամն է, մի նամակ գտա այստեղ, որից իմացա թե այնտեղի ֆակուլտետը դեռ հաստատ առաջարկություններ արած չէ միևնույնությանը: Բացի սորանից իմացա այդ նամակից, որ էլի երեք պարոնների մասին է հարցը, այնպես որ բարեկամիս առաջ հաղորդածը փոքր-ինչ փոխվել է: Նա ինձ գրում է նաև ինձ դեմ ինտրիզաներ են լարում և մի շարք պարոնների անուններ է տալիս, որոնց մասին ինձ դուռնացնում է, ասելով, որ ես դրանց հետ բացարձակ չխոսեմ, որովհետև նրանք ինձ վնասել են ուզում: Ինտրիզաներ ամեն տեղ անպակաս են: ...ողջունի՛ր խնդրեմ և բոլոր ծանոթներին, մանավանդ Բաֆֆին:

Ես դեռ չգիտեմ դասերս սկսվելուց առաջ կերթա՞մ արդյոք Բեռլին, թե ոչ, դեռ այնտեղից լուր չունիմ ո՛չ միևնույնությունից, ո՛չ էլ համալսարանից: Եթե այժմ չերթամ, այդ կանեմ, երբ արկղս փուլիկներով և քարերով կգա—ես դրանց հետս կտանեմ անթրոպոլոգիական ընկերության մեջ խոսեմ դրանց մասին:

Այստեղ գալով ես գտա 21 նամակ և 50-ի չափ գրքեր և բրոշյուրներ և ահա պետք է ամեն մեկին մի քանի խոսք գրեմ կամ գոնյա այցատոմս ուղարկեմ, որ շնորհակալությունս հայտնեմ այսպիսով ուղարկվածների համար...

1. Յաղուբյան Գասպար—տնտեսագետ, ֆինանսիստ, ֆինանսների միևնույնության պաշտոնյա:

Քո սիրալիկ նամակդ հոկտեմբերի 1-ից դրած ես ստացա և անշափ շնորհակալ եմ նրա մեջ պարունակված սիրույդ բոլոր ցույցերիդ համար:

Շնորհակալ եմ նաև հաղորդված տեղեկությունների առիթով և նույնպես այն հոգսերի համար, որ տարար թե՛ իմ դասախոսության օրինակները ուղարկելու զանազան մարդկանց, թե՛ իմ արկղը վեմեկով ուղարկել տալով:

Իմ սեմեստրը սկսվելու է եկող շաբաթ, այնպես որ ես այն մի քանի օրը, որոնց դեռ ազատ ունիմ, պետք է գործ դնեմ Բեռլին գնալու համար: Վաղ երեկոյան ուզում եմ գնալ այնտեղ և երեք-չորս օրից հետո դարձյալ այստեղ կլինեմ: Ես շատ մարդիկ պիտի տեսնեմ այնտեղ և նրանց թվում նույնպես Վիրխովին: Այնտեղ գնալը ինձ առավել հարմար է քան թե հազար ու մեկ երկար նամակներ գրել... Մի քանի օր առաջ «Ausland» աշխարհագրական շա-

բաթաթերթի մեջ երևցավ մի կարճ ռեֆերատ մի հոդվածի մասին, որ տպվեցավ անգլիական «Globe» լրագրի մեջ: Այդ հոդվածի հեղինակը՝ մի ինչ-որ James Bregth, խոսում է հայերի մասին, բայց ինձ ամբողջ ուղղութիւնը արհամարհական երևցավ, մանավանդ որ նա էլ հնացած մաշված համեմատութիւն է դուրս բերում հայերի և հրեաների մեջ, հավատացնելով, որ Հայաստան չկա, որովհետեւ բոլոր հայերը գաղթել են այնտեղից (!) և այլ սրանման հիմարութիւններ: Ես նստեցի և մի կարճ հոդված գրեցի և ուղարկեցի «Ausland»-ի խմբագրութիւն: Եթե տպվի, կուղարկեմ քեզ մի օրինակ այդ հերքման: Երեկ իմ ձեռքս ընկավ մեկ գիրք, նորերումս մեռած Geheimrath Stieler-ի մեմուարները, որոնք հրատարակվեցան նրա մահից հետո: Հեղինակը զանազան բարձր պոլիցեական պաշտոններ էր վարել մի ժամանակ 50-թվականներում Պրուսիայի մեջ և նա է եղել, որ կարողացել է ապացուցել, թե այն բախտախնդիրը, որ իրան «Լեոն իշխան Հայաստանի» էր անվանում ինչ մարդ էր. դուրս է դալիս, որ նա մի Զերնագորցի էր, այնտեղից փախած, որովհետեւ այնտեղ արդեն սկսած ուներ զանազան խաբեբայութիւններ: Այդ հարցին վերաբերյալ երկու-երեք գլուխները գրքի մեջ բավական հետաքրքիր կլինեն և մեր ընթերցողների համար և այս պատճառով ես կաշխատեմ մի կարճ զեկուցում տալ այդ գրքի և մանավանդ «Լեոնին» վերաբերյալ գլուխների մասին: Բայց կարող եմ այդ անել միայն Բեռլինից վերադառնալուց հետո. ուրեմն միայն հետևյալ նամակովս...

Շատ ողջուններ և բոլոր ծանոթներին, Բաֆֆին, Մարկոսյանցին¹, Եզեկյանին²:

1. Մարկոսյան Հովհաննես—Հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագրութիւն աշխատակից:

2. Եզեկյան Ավետիք (1849—1916)—Հրապարակախոս, բանաստեղծ, թարգմանիչ, զրադվել է ուսուցչութիւնում, եղել է Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւն քարտուղար, թղթակցել է «Տարազին», «Մշակին», «Աղբյուրին», տպագրել է «Փնջիկ» գիրքը (1901), թարգմանել է «Համլետը»:

Երեկ միայն վերադարձա Բեռլինից և այս է պատճառը, որ դեռ չկարողացա կատարել իմ խոստումս այն հոդվածի մասին որ հիշում էի իմ նախընթաց նամակիս մեջ:

Բեռլինում ես շատ ծանոթների հետ տեսնվեցա, գնացի նույնպես Վիրխովի մոտ, որ շնայելով իր միշտ զբաղված լինելու վերա, ինձ ավելի քան երկու ժամ պահեց իր մոտ, ամեն անգամ նոր խոսակցութիւն սկսելով, երբ տեսնում էր, որ ես դիտավորութիւն ունիմ վեր կենալու և գնալու: Նա քեզ և մանավանդ Մարիամին շատ բարեւում է: Շատ հարց ու փորձ էր անում Կովկասի մասին և ամեն բանից երևում էր, որ նա ճշմարիտ հետաքրքրվում է մեր երկրով և մինչև անգամ սիրեց նրան: Նրա հետ պայման կապեցինք, որ ես նրա «Vorfrage»-ի համար կգրեմ Կովկասի այն մասի նկարագրութիւնը, ուր որ ճանապարհորդել էի Բաֆֆի հետ: Ես քեզ պատմել էի մի անգամ, որ այս տարվա սկզբում Վիրխովն էր ինձ խնդրել չկրկնել իմ խնդրանքը առ

Humboldt Stiftung-ի վարչությունը իմ Հայաստան գնալու մասին, որովհետև նա դիտավորություն ուներ, որ ինձանից ուզած միջոցները մի այլ նպատակի գործադրվեին, նա ասում էր նաև, որ անհարմար կլինի եթե ես նոր այստեղ պաշտոն ստանալուց հետո երկար արձակուրդ խնդրած լինեի։ Բայց եկող տարի, ցանկանալով իրագործել իմ դիտավորությունս, ես նրան դիմեցի այժմ, հարցնելով նրա կարծիքը կհաջողվի՞ արդյոք իմ ցանկությունս, եթե ես նորից խնդրեմ ներկայացնեմ։ Նա ինձ խորհուրդ տվեց դիմել Du Bois Raymond-ին¹, որ գլխավոր կառավարիչ է հիշված Stiftung-ի։ Բայց իմ այնտեղ գնալը ապարդյուն եղավ, ես երեք անգամ գնացի հիշված պարոնի մոտ, բայց նրան տանը չգտա։ Ինձ մնում է ուրեմն այժմ միայն նամակով դիմել...

Եթե Մելիք-Աղաբալանին² կամ Մուրավյանին³ տեսնելու լինես, խնդրեմ որ ասես նրանց, որ ես արդեն դիմել եմ Փարիզ (եւ Вьрьб-ին եմ գրել) և խնդրեց անվանել ինձ այնպիսի կապիտալիստների, որք պատրաստ լինեին հանձն առնել Գավարտի պղնձահանքերը։ Պատասխան դեռ չունիմ...

Այսօր սկսեցի դասերս, դեռ շատ սակավ են լսողները, չգիտեմ ինչպես կլինի հետևյալ օրերը։

Բեռլինի մեջ տեսնվեցա մինիստրի օգնականի հետ և նա էլ ինձ ասեց, որ եւ Kiel ամբիոնի համար կազմված ցուցակի վերա եմ գտնվում։ Պաշտոնական առաջարկություն նա չարեց ինձ, որովհետև հիշված ցուցակն էլ դեռ պաշտոնապես հաղորդված չէ մինիստրությանը։ Ես քեզ գրել էի նախընթաց նամակովս, որ մի հերքում ուղարկեցի «Ausland» անվանված աշխարհագրական և ազգագրական շաբաթաթերթին այն նկատողության վերաբերմամբ, որ դա տպեց հայերի մասին։ Բեռլինից վերադառնալով խմբագիր պրոֆ. Ռատցե-լից նամակ գտա, որտեղ դա ինձ հաղորդում է, որ կտպի իմ հերքումը, «Եթե այդ նկատողությունս գլխավորապես պոլեմիական ուղղություն ունի և համեմատաբար քիչ իրողություններ (!) է պարունակում»։ Բայց նա անում է այդ որովհետև «Ausland» իրան մեղավոր է զգում տարածված անճիշտ տեղեկություններ հայերի մասին։ Խմբագիրը ինձ առաջարկում է մի առավել մշակված հոդվածով, որին նա պատրաստ է նվիրել 6—8 կոլոն իր թերթի, մի ճիշտ նկարագիր տալ հայերի դրության, ձգտումների և պահանջների, որով կհերքվի այն սխալ կարծիքը, որ տարածված է հայ ազգի մասին։ Ես իհարկե օգուտ կբաղեմ։ Վերջապես էլի մի նոր բան. այսօր ստացա մի նամակ պ. Fairman-ից, որի անունը անկասկած հիշում ես, երբ նա մոտ երկու կամ երեք տարի առաջ դիտավորություն ուներ ձեռնարկել Լոնդոնի մեջ մի լրագիր, արևելյան քրիստոնեականների օգուտները պաշտպանելու նպատակով։ Պարոնը այսօր գրում է ինձ Լոնդոնից հետևյալը։

«Պարոն, հավանաբար ձեզ կհետաքրքրի ընթերցել սրան կից Հայկական հարցի վերաբերյալ ծանոթագրությունը և տեղեկացնել ձեր բարեկամներին։ Այդ հարցը եռանդագին կերպով կքննարկվի մեր Պառլամենտում, որը կգումարվի մոտ օրերս։ Գուցե ձեզ համար հաճելի կլինի մի փոքր զբաղվել նաև այս գործով։ Ես ճշմարտապես հետաքրքրվում եմ նաև Սիրիայի հարցով (որի մասին ահա կցվում է մի տպագիր նյութ)։

* Նամակը թարգմանված է ֆրանսերենից։

Դուք այդտեղ կհանդիպեք ազդեցիկ անունների, որոնք այդ իսկ միության հենարաններն են, որը շատ հարուստ է: Կան մեծ քանակությամբ ստորագրյալներ, որոնց անուններն ես ունեմ, կարծում եմ, որ կկարողանամ դրանց համոզել հոգեպես և նյութապես նեցուկ լինել նաև հայերի հարցին, սակայն անհրաժեշտ է, որ մի քանի ճանաչված Հայեր հենց իրենք դրվեն ցուցակի վերևի մասում և այդ դեպքում գործը կհեշտանա մոտակայում ստեղծել մի հզոր միություն: Այդ միության հիմնադիրները պետք է նվիրատվություն մուծեն:

Այդ միության միջոցներով Հայաստանը կկարողանա վերստին (sic!) ազգ դառնալ, կամ հակառակ դեպքում իր հարցը լավագույն ձևով կմեկնվի ու կպաշտպանվի»:

Վերոհիշված «սրան կիցը» հետևյալն է. «Հայկական Հարցը ներկայումս լրջորեն զբաղեցնում է Եվրոպայի, և նամանավանդ, Անգլիայի հասարակության ուշադրությունը»:

Պարոն St. st. Y. Fairman-ը, անգլիացի գրողը, որն ապրել է Արևելքում շուրջ 25 տարի և որն արդեն հրատարակել է Արևելքի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ և այլն, ձեռնամուխ է եղել Հայկական հարցի վերաբերյալ մի հատուկ աշխատություն գրել և իրեն հաճելի կլինի տեղեկություններ ստանալ այդ նյութի վերաբերյալ: Հարցը վերաբերում է նաև անցյալում խոնդունում Հայկական հայրենասիրական միության կազմավորմանը, որը կզբաղվի հայերի հարցի վերաբերյալ օգտակար նյութեր հավաքելով: Այդ միությունը պետք է հանդիպի բոլոր հայերի հոգևոր, նյութական նպաստավոր պաշտպանությունը: Բոլորը, ովքեր ցանկանում են կապ պաշտպանել Պարոն Fairman-ի հետ կարող են դիմել № 25 Andalus Rouel, Clapham S. W. Londre (Angleterre)...

Այսօր այսքան միայն: Շուտով կրկին կգրեմ, մանավանդ եթե շուտով վերջացնեմ խոստացածս հոդվածը և կստանամ «Ausland»-ի խմբագրությունից իմ հերթման առանձին տիպեր որ և խոստացել էին ինձ:

1. Du Bois — Raymond էմիլ (1818—1896)—ծագումով շվեյցարացի, ֆիզիոլոգ:
2. Մելիք-Ազարյան—մեծահարուստ արդյունաբերող, ուներ հանքեր և կավածրեր:
3. Մովսիսյան—մեծահարուստ դրամատեր և կավածատեր, ուներ նաև հանքեր:

15

15 նոյեմբերի, 1883

Breslau

Երեկ հասավ ինձ քո նամակը հոկտ. 23-ի: Նա շատ ծանր տպավորություն գործեց իմ վերա և հավատացիր, որ իմ մտածմունքները միայն քո մասին էին և Մարիամի մասին, ոչ իմ մասին: Ես թեև համոզված եմ, որ եթե էլ մեր ունեցածի մի մասն ծախսվի, էլի այնքան կմնա, որ դուք երկուսով կարող եք փոքր ի շատե ապահով լինել, ուրեմն իմ մտածմունքները նորսմեջ չեն, որ դուք բոլորովին ամեն բանից զրկված կմնաք, ինձ ծանր է մտածել միայն, որ դու այնքան տանջվում ես և անդադար նոր խոշորությունների հանդիպում:

Հավատացիր, ես ինձ համար բոլորովին չեմ մտածում, մի կերպ կկատարվեմ և ամենավատ պայմանների մեջ, թեև անկասկած խենթություն կլիներ եթե ասեի, որ ինձ համար միևնույն է ունենալով բան կամ բոլորովին ոչինչ չունենալ: Բայց ամենավատն էլ, ինչ որ կարող է լինել, կատարելապես քանդվելը մեր ամբողջ ունեցածի մի կողմից առավել լավ կլիներ, քան թե այդ դրությունը՝ միշտ սպասել այդ քանդվելը: Գոնյա այն ժամանակ դրությունը որոշ կլիներ, իսկ այժմ կարգի գալու շանսերը չնայելով որ փոքր են, ինչևիցե քեզանից շատ հոգսեր, շատ աշխատանք, շատ ժամանակ են խլում, բեղ անհանդստության պատճառ են դառնում, քեզ տանջում են:

Իսկ ինչ որ վատ դրության է վերաբերվում, եղբայր, հավատացիր, որ նորանից կարելի է միշտ դուրս գալ, թեև չեմ ասում, որ սկզբից մեկ «կրախ» կարող է ծանր աղդեցություն գործել:

Այս րոպեիս որ քեզ գրում եմ, ով է իմանում, գուցե արդեն դրությունը դեպի մի կողմ կամ մյուս կողմ փոխվել է և իմ խոսքերը բնավ նշանակություն չունին:

Խոսեմ ուրեմն այլ բաների մասին:

Ես փոքր առ փոքր սկսում եմ հարաբերություններ գործարանների հետ: Մեկին նորերումս գրեցի, որ ես կարող եմ միջնորդել Գլաուբերի աղի մեծ քանակության, եթե նա ուղենա ստանալ իր գործարանի համար, որի մեջ պատրաստվում է սոդան: Երեկ նրանից նամակ ստացա, որտեղ նա թեև ասում է, որ ճանապարհի ծաղքը չափազանց մեծ կլինի և նրա ֆաբրիկայի համար (որ գտնվում է Մազդեբուրգի կողմերը) անձեռնադրելով կլինի Կովկասից Գլաուբերի աղ բերել տալ, բայց դարձյալ խնդրում է նմուշները: Գուցե այնքան բարի կլինես և կհաղորդես Սավանելուն, որ ինձ մի կտոր ուղարկի...

Դու գրում ես, սիրելիս, որ իմ հոգվածը լավ ընդունելություն ստացավ այգոսեղի հասարակության կողմից՝ դա ինձ շատ հաճելի է, ինչպես և այն երևույթը, որ և գավառներում ուղադրության վերա, <է>, ինչպես տեսնում եմ «Մշակի» մեջ հրատարակված մի քանի հոգվածներից: Ես շատ ուրախ եմ, որ իմ հրավերին հետևում են և սկսում են նկարագրել իրանց գյուղական կյանքը: Սկզբից գուցե այդ նկարագրությունները անկատար կլինեն, բայց ժամանակով նրանք էլ ինչպես և նրանց գրողները կկատարելագործվեն:

Ես «Մշակը» կանոնավոր կերպով ստանում եմ. այսօր ստացա 159 և 160: «Ausland»-ից մինչև այժմ չստացա իմ պատասխանի առանձնատիպերը և առհասարակ դեռ չտեսա դրան տպագրված, թեև խմբագիրը ինձ խոստացել է տպագրելու: «Voss. Zeit.» ուղարկեցի մի հոգված Դերբենդի և Բազվի մասին, անկասկած դա կտպվի, բայց երբ չգիտեմ, վասն զի «Voss. Zeit.» միշտ անչափ շատ նյութ ունի, մանավանդ այդպիսի «բանասիրական» բաներ, որք ավելի կամաց են տպվում, որովհետև շատ ավելի տեղ են պահանջում: Շատ զբաղված լինելով ես դեռ չսկսեցի Վիրխովի համար հոգվածս, բայց շուտով այդ էլ պիտի անեմ, նա գոնյա ինձ, ինչպես երևում է կուղենար շտապեցնել...

... Ես ուրախ էի տեղեկանալ, որ աճուրդը հետաձգվեցավ, որ քեզ հաջողվեց մտցնել բանկը պահանջված գումարը, բայց ի՞նչ ահագին զոհաբերությունների օգնությամբ: Մինչև անգամ «Մշակի» փողերը դու գործ դրիր այդ բանի համար, չիմանալով մինչև անգամ ինչպես կերթան գործերը հետևյալ ամիսներում: Եվ այդ բոլորը անելուց հետո, դու դեռ ներողություն ես խնդրում, որ ինձ այս անգամ չես կարող փող ուղարկել: Եղբայր, մի աման-չեցրու ինձ: Ախ, ես տանջվում եմ քո դրությունով. ես ինձ եմ մեղադրում, ես ամեն բանով քեզ եմ պարտական, իսկ դու կարողանում ես այդպիսի մտքեր ունենալ: Ասիր ինձ, կարո՞ղ եմ քեզ օգնել և ինչով, ասիր ինձ—ես մոլորված եմ, ես զգում եմ, որ աշխատանք չէ գնում, չէ վարձատրվում, որ չափազանց շատ ուժեր են հարկավոր փոքրի շատե նշանավոր կողմնակի եկամուտներ ունենալու համար: Ես հանգիստ չունիմ մտածելով քո դրության մասին: Այնուամենայնիվ այն առաջին տխրալի լուրերը ստանալով քեզանից, ես իսկապես ամբողջ օրը անցնում եմ աշխատանքի մեջ: Առավոտները և ճաշից ետները մինչև 7—8 ժամ երեկոյան ես պաշտոնապես համալսարանում լրագրված եմ, իսկ 8 ժամին տուն վերադառնալով դրում եմ հոգվածներ, ռեֆերատներ և այլն և այդ շարունակվում է մինչև 2 կամ 3 ժամ գիշերվա, իսկ մյուս առավոտ դարձյալ սկսվում է աշխատանքը 8 ժամին և այսպես անցնում են օրերը: Շատ անգամ զգում եմ, որ դադարած եմ, աշխատանքը առաջ չէ գնում, մտքերս աշխատանքից հեռու են: Ես մտածում էի բոլոր ինչ որ ունիմ ծախեմ, ուզում էի մինչև անգամ դրադարանս ծախել, բայց այդ վերջինից հրաժարվելով ես իմ աշխատանքս շատ դժվարացնում եմ, առանց գրադարանս ես էլ ոչինչ բանի պետք չեմ լինի, որովհետև զգում եմ, ուր ուղեղս դադրել է, չէ գործում և կարող է միայն մեքենայապես կրկնել ուրիշ ձևով ինչ որ ասել են ուրիշները: Բնակարանս ես անպատճառ կթողնեմ և կտեղափոխվեմ մի սենյակ և երբեմն կարող եմ իմ meuble-ները ծախել, բայց այդ էլ կարող եմ կատարել երկու երեք ամսից հետո միայն, վասն զի իմ կոնտրակտը տանտիրոջ հետ այնքան տևողություն ունի: Այսինքն ես իսկույն էլ կարող եմ բնակարանս թողնել: Բայց պետք է վճարեմ վարձը հետևյալ երեք ամիսների համար, ուրեմն այն ժամանակ երկու բնակարանի փող պետք է տամ, որ իհարկև խնայողության ընդդեմ կլինեի: Բայց այդ բոլորը քեզ պատմելով մի կարծիք խնդրեմ, սիրելիս, որ ես հուսահատվում եմ, ոչ, ես հույսով եմ, որ ինձ կհաջողվի մի այլ պարապմունք էլ ստանալ, որ ինձ ավելի միջոց կուտ: Ես արդեն մի քանի փորձ արել եմ, բայց դեռ պատասխան չունեմ, հույս ունիմ, որ կհաջողվի: Գուցե կհաջողվի և մի այլ պաշտոն ստանալ, որ առավել լավ է վարձատրվում աշխատանքի: Հավատացիր, ես ոչ թե միայն իբրև միջնորդության միջոց քեզ ասում եմ, որ քեզ դժվար չէ լինի մի աշխատանք ձեռք բերել: «Մշակը» երբեք չէ կարող խանդարել, որ քեզ մի այլ աշխատանք էլ առաջարկվի: Ինչպես արդեն հայտնեցիք, քեզ կարող են առաջարկել քաղաքային մի պաշտոն, կարող են և բանկային մի հիմնարկության մեջ պաշտոն առաջարկել: Ի՞նչի ես ասում որ քո հասակում մի այլ աշխատանք չես կարող

ձևեր բերել և միայն «Մշակի» վրա պետք է սահմանափակես քո գործունեությունդ: Իհարկե, եթե «Մշակը» կարողացավ պահպանվել, որի վերա ես իմ կողմից մեծ հույս ունիմ, դա քեզ համար ամենահարմար աշխատանք է, որին դու սիրով կշարունակես: Նվիրել քո ուժերը և որի վերա չես կարող նայել միայն ապրելու մի միջոցի վերա...

Դու էլ պետք է հավատաս հաջողությանը, մանավանդ, որ մեր հասարակությունը, ինչպես արդեն նորերս ասացի, հարկավոր ժամանակ իմանում է աղնիվ դպցմունքից դրդված վարվել: Ես այդ ասում էի առանց օրինակների բերելու, իսկ այժմ ինձ համար նոր ապացույց են այն համակրության ցույցերը, որոնց առիթ է տալիս Բաֆֆիի հոբելյանը:

Հասարակությունը պատվում է և պաշտպանում է «Մշակը» և ես համոզված եմ, որ փոքրաթիվ չեն այն մարդիկ, որոնք իրանց երեակայնել էլ չեն կարող մի ժամանակ առանց «Մշակի» և պատրաստ կլինեն իրանց կողմից թե՛ ղոհաբերությունների և թե՛ համակրության ցույցերի: Մի՛ թույլ տուր, որ հուսահատությունը քեզ տիրե. հուսահատված մարդը չի տեսնում մինչև անդամ բաց ճանապարհը, որ կա նրա առջև: Հուսահատությունը ընդդեմ է հակառակ է քո բնավորությանը, դու կյանքի շատ հարցերում ապացուցել ես այդ: Բացի սորանից, մի՞թե քո թշնամիներին կտալիր այդ բավականությունը, որ նրանք իրավունք ունենային դորա մասին խոսել: Ոչ, ոչ, այդ ընդդեմ է քո բնավորությանը, քո սեփական բնությունը կբողոքի դորա դեմ: Բույեական հուսահատությունը հասկանալի է, բայց ոչ տևողական:

Քաջ եղիր, վստահ եղիր, և հաջողությունը կվայելես: Պինդ սեղմում եմ քո ձեռքը, ամբողջ սրտից համբուրում եմ, գրկում եմ քեզ. իմ սիրելի եղբայր, իմ անդին բարեկամ, որին ես ամբողջ ոգով երախտապարտ եմ, որին ես սիրում եմ անկեղծ սրտով: Քաջ եղիր:

17

3 հունվարի, 1884
<Բրեսլաու>

Հենց այն րոպեին, երբ ուղում էի քեզ մի հեռագիր խփել և հարցնել քո առողջության մասին, որովհետև ամբողջ ամիս նամակներդ չէին գալիս, այսինքն մի ամսից էլ ավելի, հենց այն րոպեին վերջապես հասավ քո նամակդ դեկտ. 11-ին գրածը:

Եղբայր իմ, հիրավի շատ ու շատ տխուր կերպով, ինչպես երևում է, լուծվելու է ամբողջ գործը և ճշմարիտ ասեմ, հենց առաջին լուր ստանալով քեզանից ես գրեթե հույս չունեի որ մուլքերը փրկելու հնար լինի: Բայց եղբայր, մի՞թե ճշմարիտ հարկավոր է հուսահատվել այդ առիթով: Դու ասում ես, մուլքը կծախվի մեռած գնով ու մասնավոր պարտքերի վեճա կերթան և մնացած բոլորը—դոնյա այնպես լինեք, որ ոչինչ չմնար, բայց չմնային և պարտքեր—դա մխիթարություն կլինեք: Այն ժամանակ հոգին հանգիստ կլինեք, նոր տանջանք չէին լինի անդադար պահանջներով պարտատերերի կողմից: Լայդ մասնավոր պարտքերը իհարկե քո վերա <չեն մնա>: Մենք երկուսս նույնչափ պատասխանատու ենք պարտքատերերի առաջ, իսկ եթե ոչինչ չմնա, ի՞նչ տեղից պիտի տանք: Եատ-շատ կարող են պարտքատերերը մասամբ իմ

ռոճիկից պահանջեն, մասամբ «Մշակի» եկամուտներից, որ կարողանար—բայց ո՛չ մին, ո՛չ մյուս այդ եկամուտներից այնպիսին չէ, որ կարողանար պահանջները լրացնել: Ես, իհարկե, հենց որ ստանամ քեզանից լուրը, որ ամեն բան վերջացավ, ծախսվեցավ և պարտքերը դեռ մնացին մեզ վերա, իսկույն պիտի ծախեմ իմ կահկարասիքը, իմ գրադարանից գոնյա մասամբ պիտի հրաժարվեմ—բայց դա ինչ կարող է տալ: Գրադարանս որքան էլ մեծ և թանկագին լինի, այնուամենայնիվ լավ է եթե 1/4 կամ 1/5 դնով առնվի և ուրեմն կտա մի քանի հարյուր ռուբլի միայն: Նույնը կլինի և իրեղեններիս հետ: Բացի սորանից ոչինչ չունիմ և ուրեմն ինձանից ոչինչ էլ պահանջել չեն կարող: Թեև ես իհարկե իմ պատվասիրությունս եմ համարում մոտոս ոչինչ չպահել, որ փոքրիշատե գին, արժեք ունի: Բայց այնուամենայնիվ ես չեմ հուսահատվում և շատ կուզենայի, որ դու էլ իմ տեսակետից նայեիր այդ բոլոր անցքերի վերա:

Որքան էլ դու թերահավատությունամբ նայում ես «Մշակից» ստանալու միջոցների վերա, ես այնուամենայնիվ պնդում եմ մի ներքին համոզմունքի վերա հիմնվելով, որ «Մշակը» քեզ միջոց կտա ապրելու: Իսկ ես իմ կողմից, բացի այժմյան ռոճիկից, ամեն կերպ պիտի աշխատեմ կողմնակի վաստակներ ունենալ: Կրագիրներին կաշխատակցեմ, թարգմանություններ կանեմ, մասնավոր դասեր կտամ, օրինակ, ռուսաց լեզվից, մի խոսքով ո՛չ ժամանակ, ո՛չ աշխատանք չեմ խնայի, և եթե առողջություն ունենամ, այն ժամանակ դու էլ հաշվիր իմ վաստակի վերա իբրև քո սեփականության վերա:— Եղբայր, դու սկզբից ևեթ հրաժարվում ես ինձանից բան ընդունել, բայց այս ըոպեիս ես ոչինչ էլ դեռ չեմ կարող քեզ առաջարկել: Նախ և առաջ ես բոլոր կյանքս այլ կերպ պիտի կանոնավորեմ, իսկ դրա վերա կանցնին մի երկու-երեք ամիս: Գուցե, եթե առավել շահավետ պարապմունք գտնեմ, կհրաժարվեմ էլ իմ պաշտոնից—բայց այդ վճիռը մի ըոպեի մեջ և այն էլ երբ միտքը հուզված է, բռնել անհնարին է, պետք է մտածել, իրար տեսնել: Բայց մի բան կարող եմ քեզ առաջուց խոստանալ, որ ես ամեն ջանք, ամեն ուժ, ինչ որ կա իմ մեջ, պիտի գործ դնեմ, որ անգործ չմնամ, չհաշտվեմ այդ դրության հետ: Մի ելք պիտի գտնեմ և հույսով եմ, որ կգտնեմ: Եթե ամեն բան քո շուրջը առավել հաջող վերջանա բան դու և ես կարծում ենք, եթե մուլքերից մի բան հնարավոր եղավ փրկել, եթե այնքան կմնա, որ դու փոքրիշատե ապահով լինես Սարիամի հետ, այն ժամանակ ես այդ արդեն մեծ բախտ կհամարեմ: Աղաչում եմ քեզ, սիրելիս, եթե այնքան մնա, որ ձեզ երկուսիդ համար քիչ-շատ հնար կտա ապրելու, այն ժամանակ իմ մասին մի մտածեք, այն ժամանակ ես էլ իմ աշխատանքով բոլորովին ապահովված կլինեմ: Իսկ եթե ճշմարիտ ոչինչ չմնա—այն ժամանակ մի ծածկիր այդ ինձանից և մի ասա, որ դու իմ նվազ աշխատանքս մերժում ես...

Եղբայր, միայն մի միտք պետք է կատարելապես հեռացնես քեզանից, ոչ ասես և ոչ էլ մտածես այնպես, ինչպես այսօրվա նամակումդ ես արտահայտվում, որ ես որևիցե առիթ կարողանայի ունենալ քեզանով, քո կառավարությամբ դժգոհ լինել: Հավատացիր, ես համոզված եմ, որ դու ամեն բան անում էիր և արեցիր ինչ որ հնար էր: Ես, ինչպես արդեն ասացի քեզ, մինչև վերջին շունչս շնորհակալություն կզգամ դեպի քեզ այն բոլոր զոհաբերություններին համար, որ դու նվիրեցիր ինձ: Ես երախտապարտ եմ քեզ ամբողջ

սրտով: Կատարյալ անկեղծությամբ և եթե գուցե խոսքով չեմ կարող բոլորը արտահայտել, սրտիս մեջ զգում եմ մի ջերմ շնորհակալություն գեպի քեզ:

Մի հուսահատվիր, աղաչում եմ քեզ, եղբայր և մտածիր որ ոչ մի դրություն չկա, որից չգտնվի մի ելք և այդպիսի ելք գտնելու համար առաջին պայմանն է իսկ շնուսահատվել, այլ վստահությամբ նայել սեփական ուժերի վերա: Իսկ ուժերը փոքր չեն: Դու կազմեցիր քեզ մի դիրք, անուն ևս վայելում, ազդեցություն ունիս, անսովոր չես աշխատելու—ուրեմն եթե մի այնպիսի գործին ձեռք տաս, որ կարող ես առաջ տանել, դա պետք է հաջողվի:

Նախ և առաջ սպասենք, տեսնենք ինչով ամեն բան կվերջանա, ինչպես կծախվի—կմնան կամ չեն մնա պարտքեր, ինչպես կվերաբերվի հասարակությանը դեպի քո դրությունը, դեպի «Մշակը», բացի սորանից քեզ դժվար չի լինի մի աշխատանք գտնել մի բանկի մեջ, քաղաքային պաշտոն ստանալ, մի խոսքով մի պարապմունք, որ քեզ ձեռնտու կլինի: Որքան էլ թշնամիներ ունենաս, ոչ մեկը նրանցից չի լինի, որ քեզ հարգելիս չլինի...

18

19 փետրվարի, 1884

<Բրեսլաու>

Այս ընդհանուր ստացա 19 հունվարի գրած նամակդ և շտապում եմ գոնյա մի քանի խոսք գրել: Դու անկասկած շատ շուտ ստացար նամակներս, անհանդիստ մի եղիր իմ մասին, սիրելիս, ես կատարելապես առողջ եմ, բայց շատ գործ ունիմ, շատ զբաղված եմ թե՛ մոլորների գործերով, թե՛ իմ սեփական գործերով, այս պատճառով նամակ կարող է մի երկու օր ուշանալ, բայց ոչ ավելի: Վերջին նամակս, որի մասին տեղեկություն ունի, որ ստացար նրան հունվ. 23-իցն էր (№ 14), հետո ես գրեցի փետրվարի 4-ին և 11-ին, հուլյս ունիմ դրանք էլ հասան քեզ այժմ: Ես ամեն միջոցներ փորձում եմ եղբայր, թե ծախելն հաջողացնելու, թե այլ միջոցներ, գումարներ ստանալու, կամ տեղ ընդունելու, որ ինձ ավելի եկամուտ տար, որ քեզ կարողանամ մի գումար առաջարկել: Ինչպես հաղորդեցի քեզ, արդեն ես Բեռլին գրեցի Գերիկեին: Թեև նրանից դեռ լուր չունիմ, բայց ես հավատացած եմ, որ նա կանի ինչ որ կարող է, ինչ որ նրանից կախված է և նա այդ վարմանալի սովորություն ունի չգրել մինչ որ մի դրական բան չկարողանա ասել: Ես հուլյս ունիմ շուտով երեք-չորս օրից հետո քեզ մի բան դրա մասին գրելու, ես Գերիկեին կտեսնեմ Բեռլինում, ուր պիտի երկու օրով երթամ, որովհետև միևնույն օգնականից այսօր նամակ ստացա, որով նա ինձ հրավիրում է Ախենի բազմարվեստանոցի ամբիոնն ընդունելու և խնդրում է գամ այս օրերս նրա հետ խոսակցելու: Ես ստիպված եմ ուրեմն Բեռլին երթալու երկու օրով, որովհետև ինձ պայմանները հայտնի չեն և ես ուրեմն ո՛չ այո, ո՛չ էլ ոչ կարող եմ այստեղից նրան ասել:

Շաբաթ օրը (այսօր երեքշաբթի է) հուլյս ունիմ Բեռլին լինել և ուրեմն նույն օրը Գերիկեին կտեսնեմ, նրանից կլսեմ ինչ է ասում, ինչ է արել, ինչ շանսեր կան Գալլերիայի ծախելու համար: Գուցե Սլոբոտկան ավելի հեշտությամբ հաջողվի...

Ես շատ զբաղված եմ ամեն տեսակ բաներով, գործերով, ճշմարիտ ասեմ, հաշիվ ժամանակ ունիմ ուտելու և քնելու համար, ամեն կողմից ինձ առաջար-

կություններով են դիմում աշխատակցելու այս կամ այն ձեռնարկությանը և եթե ես երեք գլուխ ունենայի և երեք զուգ ձեռքեր, փոխանակ մի ողորմելի, դանդաղաշխատող գլխի—էլի չէի հաշոգեցնի բոլորը: Շատ բանից հրաժարվում եմ, բայց դարձյալ ինձ են գիմում, համոզում, գրեթե աղաչում են: Այսպես օրինակ, մի Freither von Nathusins ձեռնարկում է մի Universal-lexicon: Ուզում է անպատճառ, որ ես այդ գրքի համար գրեմ «Armenien» հոդվածը, իր մոտ 1/2 տպագրական թերթ պիտի ամփոփի: Ես պարոնի հետ բնավ ծանոթ չեմ, գրում եմ ժամանակս չի ներում հանձն առնելու մի այս տեսակ գործ, որ ես կուղենայի մշակված ներկայացնել նրան: Ինձ պակաս է հարկավոր գրականություն, որ այստեղ չունիմ և չեմ կարող ճարել այստեղ... Զգիտեմ ինչ անեմ, ինչ պատասխանեմ: Ինձ հարկավոր կլինեի այդ հոդվածի համար ունենալ լեզվի և գրականության համար Այստեղյանին, Զարբհանայանի I հատոր, Langlois-ի¹ թարգմանության երկու հատորները, Կիրակոս Գանձակեցու Brosset-ի² թարգմանությունը, Սոմալի³ „Quadro della storia letteraria“: Աշխարհագրության և տեղագրության համար և ունիմ Ալիշանին (տեղագիր)⁴ և Սարգիսյանը, բայց ինձ պակաս է Ինձիճյան, որ և Թիֆլիսի գրքերիս մեջ չկա: Իսկ պատմության վերաբերյալ գրքերս շատ թերի են: Բնագրերից ոչինչ չունեմ, ո՛չ Մովսես Խորենացի, ո՛չ Փարպեցի, ո՛չ Նղիշե, ոչինչ մի խոսքով բացի Բյուզանդացին, Պատկանյանի նոր հրատարակությունը, չունեմ Զամչյան: Ինչ անեմ, ինչպես ընդունեմ այսպիսի աշխատանք, որի տակ անունս էլ կլինի առանց օրինավոր և մշակված հոդված տալու: Խնդրեմ սիրելիս, մի խրատ տուր ինձ կամ գուցե վերոհիշված գրքերս, որ մասամբ խմբագրության մեջն են, մասամբ քո սենյակում (կապոցդ) կարող կլինես par grande vitesse ինձ ուղարկել—իհարկե իմ հաշվով: Հոդվածը նախնդրում է մինչև հուլիսի սկիզբը պատրաստ լինի:

Ներիր որ քեզ անհանգստացնում եմ այսպիսի բաներով, որ հեռու են այժմ քո մտածմունքներից...

1. Langlois Վիկտոր (1829—1869)—ֆրանսիացի հայագետ-արևելագետ:

2. Brosset Մարի (1802—1880)—անվանի հայագետ-վրացագետ, կալսերական ակադեմիայի անդամ:

3. Սոմալ—անգլիացի հայագետ, գրել է մի շարք հայագիտական աշխատություններ:

4. Նկատի ունի Ղևոնդ Ալիշանի «Շիրակ—տեղագրություն պատկերացույց» գիրքը, Վենետիկ, 1881:

ПИСЬМА АНДРЕАСА АРЦРУНИ ГРИГОРУ АРЦРУНИ

Кандидат филол. наук В. Г. ВАРДАНЫАН

(Резюме)

Публикуемые письма видного ученого, профессора Берлинского, Бреславльского, Ахенского университетов, члена-корреспондента Российской АН Андреаса Арцруни (1847—1898), адресованные его брату, основателю и редактору газеты «Мипак» Григору Арцруни (1845—1892), освещают ряд важных сторон общественной и научной жизни того времени, а также знакомят с отдельными эпизодами жизни и деятельности братьев. Письма хранятся в Музее литературы и искусства им. Е. Чаренца (ф. Гр. Арцруни), публикуются с некоторыми сокращениями.